

ՎԻՋԱՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

1960 թ. ի վեր Վ. Սարոյանը քանիցս եղել է Հայաստանում, շփվել Խորհրդային Հայաստանի մտավորականության ներկայացուցիչների հետ, ինչի լավագույն վկայություններն են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) պահպանվող և ստորև ընթերցողի ուշադրությանը ներկայացվող նամակները: Դրանք պատանիներ են Սարոյանի՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանի (№ 1–7, 9), գրականագետ Լևոն Մկրտչյանի (№ 8) նամակագրությունից: № 10–11-ը մի կողմից Ֆրեզնոյում գործող «Վիլյամ Սարոյան հիմնարկություն» հաստատության, Ֆրեզնոյի քաղաքապետի և մյուս կողմից Վարդգես Պետրոսյանի նամակագրությունից են ու վերաբերում են Վ. Սարոյանի աճյունի մի մասը հայրենիք տեղափոխելու հարցին:

Նամակներից № 1, 2, 4, 6-ը մասնակի կրճատումներով տպագրվել են «Սովետական արվեստ» ամսագրում (1988, № 8, էջ 34–38), մյուսները ընթերցողին են ներկայացվում առաջին անգամ: Նամակների գործավարական թարգմանություններում կատարվել են լեզվաոճական մասնակի շտկումներ:

ԷՄՄԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

№ 1

20 ապրիլի 1976 թ.
Փարիզ

< Վարդգես Համազասպյանին >

Խնդրում եմ ինձ ուղարկվող բոլոր թերթերը, ամսագրերը և գրքերը առաքել իմ նոր հասցեով. 1821 15th Avenue San Francisco California 94122 U. S. A.

Եթե հնարավոր է, խնդրում եմ պրն Գրիգոր Ադամյանի հետ ուղարկել տեղեկություններ հայերեն լույս տեսած իմ պիեսների մասին: Ես կցանկանայի տեսնել «Իմ սիրտը լեռներում է» ներկայացման տեսարանների և գործող անձանց լուսանկարները և, առանձնապես, կցանկանայի ունենալ այդ պիեսի համար Առնո Բարաջանյանի գրած երաժշտության ձայնագրությունը կամ ձայնապնակը: Նույնը վերաբերում է նաև իմ մյուս՝ «Խաղողի այգի» պիեսին: Ենթադրում եմ, որ այս պիեսներից յուրաքանչյուրն ունի իր բեմականացման պատմությունը, և ես կուզենայի մի քանի տեղեկություններ իմանալ այս առթիվ: Ե՛րբ է առաջին

անգամ բեմադրվել այդ պիեսը¹, դրանից հետո է ըր են եղել այլ ներկայացումներ: Ցավում եմ, որ բացի անգլերենից ոչ մի այլ լեզվով կարողալ չեմ կարողանում՝ ո՛չ հայերեն և ո՛չ էլ ռուսերեն: Ես կարծում եմ, որ կգտնվի որևէ մեկը, որ անգլերեն կմեքենագրի իմ այս նամակի պատասխանը և իմ խնդրած տեղեկությունները: Կուզենայի իմանալ նաև, թե իմ գրքերից որոնք են թարգմանվել հայերեն, որոնք են հրատարակվել և վաճառվել: Ենթադրում եմ, որ թե՛ պիեսների բեմադրության և թե՛ գրքերի հրատարակման համար գոյություն ունի վճարման կարգ՝ համաձայն Ժնևի հեղինակային իրավունքի: Եվ եթե այն գոյություն ունի, կարո՞ղ եք Դուք ինձ հայտնել, թե որքան է յուրաքանչյուր գործի վճարման գումարը: Նամակս մի քիչ բիզնեսի բնույթ ունի: Խնդրում եմ ինձ ճիշտ հասկանալ: Ես ոչ մի կատարության, մշակութային ընկերության, ոչ մի խնամակալի կողմից դրամական նպաստ չեմ ստանում: Իմ փողը ես վաստակում եմ գրելու շնորհիվ, հետևաբար այս վճարումների հարցը ինձ համար ունի կարևոր նշանակություն:

Ես ցանկություն ունեմ այցելելու Հայաստան: Եթե իմ պիեսներից և գրքերից եկած գումարը պահվում է, ապա կցանկանայի իմանալ, թե ինչպիսի՞ն է դրա տնօրինման օրենքը: Ես գիտեմ, որ թույլատրվում է այդ դրամով գնումներ կատարել: Կթույլատրվի՞ արդյոք դրամով նվիրատվություն կատարել ընկերներին, ծանոթներին, բարեկամներին: Երբ ստանամ Ձեզանից այս նամակում խնդրած տեղեկությունների պատասխանը և եթե այցելեմ Հայաստան, ապա մեծ ցանկություն ունեմ թարմացնելու իմ հարաբերությունները մի շարք մարդկանց հետ, այդ թվում՝ Փարիզի իմ հարևան Էդվարդ Ադամյանի, բիթլիսցի դրամատուրգ Արամ Արշակի Բարոյանի (ճիշտ եմ գրել ազգանունը)², որի հետ ես ծանոթացել եմ 1960 թ., Սունդուկյանի թատրոնի ռեժիսոր Աճեմյանի, Խարկովի, թե Ռոստովի երկաթուղային կայարանում ծանոթացած մի կինոռեժիսորի հետ, որի ազգանունը նույնպես Սարոյան է, և Պատրիկ Սեյանի³ հետ, որը մի ժամանակ ապրում էր Լոս Անջելեսում, և որը մեծապես օգնեց ինձ, երբ ես 1960 թ. այցելել էի Երևան: Գուցե նա կարողանա օգնել Ձեզ, որպեսզի իմ այս նամակի պատասխանը գրվի անգլերեն, որից հետո պրն Գրիգոր Ադամյանը այն իր հետ կրերի Փարիզ: Եթե ունեք հայերեն լույս տեսած իմ գրքերից, ապա կխնդրեի, որպեսզի դրանցից յուրաքանչյուրից մի երկու-երեք օրինակ ուղարկեք ինձ վերևում նշված իմ Սան Ֆրանցիսկոյի հասցեով:

Հուսով եմ, որ Դուք շատ լավ եք, և խնդրում եմ իմ ողջույնները հաղորդել ընկերոջս՝ Վահագն Դավթյանին, ինչպես նաև Հովհաննես Բադալյանին, բոլոր մյուս ընկերներին, որոնց հանդիպելու հաճույքն ունեցել եմ Երևանում, Փարի-

¹ Վարդան Աճեմյանը Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսը բեմադրել է 1961 թ.:

² Խոսքը, թերևս, դրամատուրգ Արամաշոտ Պապայանի (1911–1998) մասին է:

³ Պատրիկ Սեյան (1896–1978) – հրապարակախոս, հասարակական գործիչ: Մինչև 1948 թ. ապրել է ԱՄՆ-ում, խմբագրել է «Լրաբեր» օրաթերթը: Տեղափոխվել է Հայաստան, խմբագրել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օրգան «Սովետական Հայաստան» ամսագիրը, երկար տարիներ պաշտոնավարել այդ կոմիտեում:

զում, Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում և Ֆրեզնոյում: Առանձնահատուկ ողջույններս խնդրում եմ հաղորդել Վիկտոր Համբարձումյանին:

Մնամ անկեղծորեն՝

Վիլյամ Սարոյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 139-140: Թարգմանություն անգլերեն բնագրից (բնագիրը՝ նույն տեղում, թ. 136, մեքենագիր):

№ 2

5 մայիսի 1976 թ.

Փա րիզ

Հարգելի ընկեր Վարդգես Համագասպյան,

Շատ շնորհակալ եմ իմ ապրիլի 20-ի նամակի Ձեր ապրիլի 30-ի պատասխանի համար, որը ինձ հանձնեց պրն Գրիգոր Ադամյանը: Հատկապես ես շատ շնորհակալ եմ, որ Դուք այդ պատասխանը անգլերենով էիք գրել, քանի որ, ինչպես Դուք գիտեք, ես կարողանում եմ խոսել ու հասկանալ, երբ ուրիշներն են խոսում հայերեն, սակայն ես ի վիճակի չեմ գրել և կարդալ հայերեն:

Ձեր նամակում շատ անուշ խոսքեր կային ինձ ուղղված, սակայն միաժամանակ մի շարք կետերի պատասխան չէիք տվել:

1. Որևէ մեկը կնշի՞ իմ այն գրքերի անունները, որոնք թարգմանվել են հայերեն և հրատարակվել Հայաստանում: Եվ արդյոք կարո՞ղ էք ուղարկել այդ գրքերից 2-ական օրինակ իմ Սան Ֆրանցիսկոյի հասցեով:

2. Կարո՞ղ էք արդյոք ուղարկել իմ պիեսների և թատերական գործերի բեմադրության պատմությունը և միաժամանակ յուրաքանչյուր բեմադրության ծրագիրը (եթե Դուք ունեք այդ ծրագրից միայն մեկ օրինակ, ապա խնդրում եմ ուղարկել դրանց լուսապատճենը): Կխնդրեի ինձ ուղարկել նաև ամեն ներկայացման բեմադրությունից առնվազն 1 լուսանկար, որը պատկերի բեմական տեսարան և գործող անձանց:

3. Կարո՞ղ էք մագնիտոֆոնի ժապավենի վրա ձայնագրել և ինձ ուղարկել «Իմ սիրտը լեռներում է» պիեսի համար Առնո Բարաջանյանի գրած երաժշտությունը: Եթե Ձեր տրամադրության տակ կա այս պիեսի շարժանկարի երաժշտությունը, ապա կխնդրեի, որ այն նույնպես ձայնագրեիք և ինձ ուղարկեիք: Դա ավանդույթ է, և պետք է ասեմ, որ Ժննի կոնվենցիայի մասնակից երկրները, նախքան որևէ հեղինակի գործը շարժանկարի վերածելը, պետք է թույլտվություն ստանան հեղինակից: Ասեմ՝ ինչի համար: «Իմ սիրտը լեռներում է» պիեսի էկրանավորման ռեժիսորը, դիրեկտորը, դերակատարները կարող են չհամապատասխանել այդ պիեսի բովանդակությանը, քանի որ դրանց ոչ ճիշտ ընտրությունը կարող է վնաս պատճառել պիեսին, հեղինակին, և, որ ամենակարևորն է, հայ հանդիսատեսին: Այժմ, երբ շարժանկարը արդեն պատրաստ է, կցանկանայի իմանալ՝ ո՞վքեր են ֆիլմի ռեժիսորը, դիրեկտորը, սցենարի հեղինակը, դերակատարները: Նաև կցանկանայի ունենալ մի շարք լուսանկարներ,

ինչպես նաև ֆիլմի մասին ազդագրեր՝ յուրաքանչյուրից առնվազն 2-ական օրինակ:

Գոյություն ունի այսպես կոչված տեսագրություն: Եթե դժվար չէ և մեծ ծախսերի հետ չէ կապված, կարող էր դուք ինձ ուղարկել այդ կինոնկարի տեսագրությունը: Այս ամենը մեծ հոգս կարող է թվալ, սակայն պիտի ասեմ, որ գրելը նույնպես մեծ հոգս է: Եվ այն, ինչ ես եմ գրում, իմ երկար տարիների դժվարին աշխատանքի արդյունք է, և ես ուզում եմ, որ բոլոր ժողովուրդները ընդհանրապես և հայ ժողովուրդը մասնավորապես ու քաղաքականության հետ չկապված աշխատավոր ժողովուրդը, որոնք մարդկային ցեղի իսկական ազնվականական շերտն են կազմում, իմ գործերը կարդան այնպես, ինչպես ես եմ գրել՝ չաղավաղված, չփոփոխված, պարզ և շիտակ:

Այո՛, ես շատ մեծ ցանկություն ունեմ կրկին այցելելու մեր սիրելի հայրենիքը: Ես բարկանում եմ, երբ հիշում եմ, թե ինչպես Վաշինգտոնում մի քանի հայեր և ռուսներ պատշաճ պատասխանատվություն չցուցաբերեցին իմ հանդեպ, երբ ես իմ իրերը հավաքել ու պատրաստվում էի թոչել Երևան, որով և իսանգարեցին ինձ իրագործելու իմ ձգտումը՝ տեսնվել Գուրգեն Մահարու և Մարտիրոս Մարյանի հետ: Այժմ այդ երկու ընկերները մահացած են, և ես չեմ կարող նրանց հետ հանդիպել մի վերջին անգամ:

Չգիտեմ, թե Ձեզանից կրկին նամակ կստանա՞մ, թե՞ ոչ, բայց երբ ես նորից այցելեմ Հայաստան, պետք է զգամ, որ Հայաստանում կան պատասխանատու անձինք, որոնք կբավարարեն իմ խնդրանքները և հնարավորություն կտան ինձ հավատալու, որ իմ այցը կլինի թե՛ մտածված և թե՛ հաճելի: Կրկին շնորհակալություն Ձեզ՝ Ձեր բարեմաղթությունների համար:

Հ. Գ. Խնդրում եմ բարևներս հաղորդել Ադամյանի զարմիկին՝ Գրիգոր Քեշիշյանին⁴ և ասել նրան, որ ինձ անզլերեն գրի, թե իմ գործերից ինքը որոնք է թարգմանել և այդ թարգմանություններից մի քանի օրինակ ինձ ուղարկի:

Մնամ անկեղծորեն՝

Վիլյամ Մարոյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 127-128: Թարգմանություն անզլերեն բնագրից (բնագիրը՝ նույն տեղում, թ. 126, մեքենագիր):

⁴ Գրիգոր Քեշիշյան (1921–1980) – գրող, թարգմանիչ: Թարգմանել է Վ. Մարոյանի «Մարդկային կատակերգություն» վիպակը:

15 հունիսի 1976 թ.

Երևան

Հարգելի պարոն Սարոյան,

Ես մեծ սիրով ու հետաքրքրությամբ կարդացի մայիսի 5-ի Ձեր նամակը: Հաճույքով տեղեկացնում եմ Ձեզ, որ Ձեր գրքերից հայերեն են թարգմանվել և հրատարակվել հետևյալները՝ «Վաթսուն մղոն մեկ ժամում» (դա կարճ պատմվածքների ժողովածու է), «Մարդկային կատակերգություն», «Իմ սիրտը լեռներում է», «Վեսլի Ջեքսոնի արկածները» և «Խաղողի այգին»: Բոլոր գրքերը անմիջապես վաճառվեցին՝ տպագրությունից դեռ մի քանի օր չանցած: Մենք խնդրեցինք Երևանի հանրային գրադարանին, որ մեզ տրամադրեն մի քանի օրինակ Ձեր գրքերից, ինչն էլ նրանք բարյացակամորեն արեցին: Մի քանի օր առաջ Ձեր՝ Սան Ֆրանցիսկոյի հասցեով ուղարկեցինք վերոհիշյալ բոլոր գրքերը (ամեն մեկից մի օրինակ), բացի «Վաթսուն մղոն մեկ ժամում»-ից, որը, դժբախտաբար, ձեռք բերել չկարողացանք:

Մենք Ձեզ ենք ուղարկել նաև տիկին Նատալի Գոնչարի⁵ գրքերը (երկու օրինակ, ռուսերենով), որոնք Ձեր մասին են: Գրքերի հետ կգտնեք նաև տիկին Գոնչարի նամակը՝ ուղղված Ձեզ:

Մենք ժապավենի վրա ձայնագրել ենք նաև Ձեր հանրահայտ «Իմ սիրտը լեռներում է» պիեսի համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտությունը և մոտ ապագայում այն կուղարկենք Ձեզ Սան Ֆրանցիսկո եկող որևէ վստահելի անձնավորության հետ:

Հավանական է, որ մենք Ձեզ կուղարկենք Ձեր պիեսների հրատարակման պատմությունը, ինչպես նաև պիեսների ծրագրերը և բեմադրության տեսարանները ներկայացնող լուսանկարներ՝ դրանց ուղեկցող բացատրություններով:

Դժբախտաբար, տեխնիկական պատճառներով չկարողացանք «Իմ սիրտը լեռներում է» ֆիլմը տեսագրել Ձեզ համար, սակայն Ձեր այդ ցանկությունը կիրականացնենք հնարավորինս շուտ:

Հարգելի պարոն Սարոյան,

Դուք պետք է որ լավ իմանաք, թե ինչ սեր ու հարգանք էք վայելում Սովետական Միությունում և հատկապես Հայաստանում: Մենք երջանիկ ենք, որ Դուք մտադիր էք հայրենիք գալ: Կարող էք գալ, երբ ցանկանաք: Սակայն խնդրում ենք մեզ հետ նախօրոք կապվել, որ կարողանանք Ձեզ Մոսկվայում դիմավորել: Դուք մեր ցանկալի հյուրն էք, և Ձեր մնալու, ինչպես նաև վերադառնալու բոլոր ծախսերը կհոգա մեր կոմիտեն: Բայց, դժբախտաբար, ըստ գործող օրենքի, անհնար է Ձեզ այստեղից տոմս ուղարկել: Սակայն եթե Դուք գնեք տոմս, մենք մեծ հաճույքով կվճարենք դրա արժեքը սովետական դրամով:

⁵ Նատալի Գոնչար [Նատալյա Գոնչար (Խանջյան), 1937] – թարգմանչուհի, գրականագետ: 1975 թ. պաշտպանել է թեզ «Պատմվածքի ժանրը Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հրատարակել է բազմաթիվ հոդվածներ ու գրքեր Սարոյանի և նրա ստեղծագործությունների մասին:

Հոկտեմբերը լավագույն ամիսն է Հայաստանում: Հուսով ենք՝ կրնդունեք մեր հրավերը, և Ձեր երկրպագուները մեկ անգամ ևս կվայելեն Ձեզ տեսնելու հաճույքը:

Խնդրում ենք տեղեկացնել Ձեր որոշման մասին, որպեսզի կարողանանք ժամանակին լուծել վիզայի հետ կապված հարցերը:

Հարգանքներով՝

Վարդգես Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 129-130: Անզլերեն պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն պատճենից:

№ 4

27 օգոստոսի 1976 թ.

Ֆրեզնո

Հարգելի պրն Համազասպյան,

Շատ շնորհակալություն Ձեր հունիսի 15-ի նամակի համար, որը ինձ հասավ հունիսի 29-ին: Իսկ մեկ ամիս անց Վարազ Սամվելյանը⁶ ինձ բերեց «Իմ սիրտը լեռներում է» պիեսի համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտության ձայնագրությունը, ինչպես նաև այդ պիեսի բեմադրության ու հեռուստատեսային ֆիլմի լուսանկարները: Վարազ Սամվելյանի մեքենայով մենք գնացինք էլեկտրոնիկայի խանութ, ուր Ձեր ուղարկած ժապավենը փոխադրեցինք կոշտ սկավառակի վրա, որպեսզի հնարավոր լինի այն լսել: Ես լսեցի այդ երաժշտությունը մեծ հաճույքով ու հիացմունքով: Իմ խորագրաց հարգանքներն ու սրտագին մաղթանքները ընկերոջս՝ Առնո Բաբաջանյանին: Երաժշտությունը տևում է 8 րոպե, և, ըստ իմ ենթադրության, դա պիեսի ու հեռուստատեսային ֆիլմի հիմնական երաժշտությունն է, որը հնչում է ամբողջ պիեսի ու ֆիլմի ընթացքում: Ուշադրությամբ ծանոթացա լուսանկարներին և թաքուն սիրահարված եմ պիեսներիս բեմադրությանն ու էկրանավորմանը:

Նատայի Գոնչարի ռուսերեն գրած երկու գրքերը տակավին տեղ չեն հասել: Հավանաբար, Դուք դրանք ուղարկել եք իմ Սան Ֆրանցիսկոյի հասցեով, և քանի որ ես երկար ժամանակ չեմ եղել Սան Ֆրանցիսկոյի իմ տանը (որը այժմ գրադեցրել է ավագ քույրս՝ Կոզետը), ուստի ես չգիտեմ, թե այդ գրքերը տեղ են հասել, թե՞ ոչ: Դուք գիտեք, որ ես կարողանում եմ կարդալ միայն անգլերեն և ֆրանսերեն: Մակայն իմ գրքերը թարգմանվում են իսպաներեն, իտալերեն, գերմաներեն: Ես ցանկանում եմ ունենալ այդ բոլոր լեզուներով թարգմանված իմ գրքերը: Ես, իհարկե, ստացել եմ տիկին Գոնչարի ձեռագիր նամակը, որը կար-

⁶ Վարազ Սամվելյան (Վարազդատ Սամվելյան, 1917-1995) – քանդակագործ, նկարիչ: 1957 թվականից բնակվել է Ֆրեզնոյում, եղել Վ. Մարոյանի մտերիմներից մեկը: Ֆրեզնոյում տեղադրված «Մասունցի Դավիթ», «Վարդան Մամիկոնյան», «Վիլյամ Մարոյան» արձանների հեղինակն է:

դացի մեծ հաճույքով և ջերմ հետաքրքրությամբ: Ես նրան եմ հղում իմ անկեղծ ողջույնները և շնորհակալությունները՝ իր նամակի ու գրածների համար, անկախ նրանից, թե իր գրածները ինձ են վերաբերում, թե ոչ:

Ես համոզված եմ՝ Դուք գիտեք, որ երկու անգամ այցելելուց հետո (1935 թ. մայիս և 1960 թ. հոկտեմբեր) տարիներ ի վեր ինչ մեծ ցանկություն եմ ունեցել այցելելու Հայաստան: Մի անգամ Փարիզում ես փորձեցի վիզա ստանալ, սակայն հանդիպեցի այնպիսի սոսկալի բյուրոկրատական վերաբերմունքի, որ վրդովված մերժեցի այդ վիզան: Իմ այս քայլը անհրաժեշտ էր և անխուսափելի: Ռուսաստանի դպրոցները, որոնք իրենց ներկայացուցիչներին ուղարկում են աշխարհի 4 ծագերը, պետք է այս մարդկանց սովորեցնեն անկեղծ և պարկեշտ վարվեցողություն, բայց, ինչն է, դա իմ գործը չէ, որ ես այդ մարդկանց վերաբերմունք սովորեցնեմ: Ես ուղղակի պատասխանեցի, որ այդ վիզայի կարիքը չեմ զգում: Իմ այդ այցելության նպատակն էր մի վերջին անգամ հարգանքներս մատուցել զառամյալ Մարտիրոս Մարյանին և իմ հին ընկերոջը՝ Գուրգեն Մահարուն: Մի ուրիշ անգամ, ինչպես Դուք գիտեք, ես հավաքել էի իմ բոլոր իրերը և պատրաստ էի թռչել Հայաստան, սակայն Վաշինգտոնի դեսպանատանը նույնպես հանդիպեցի նման կոպտության և կասկածալի վերաբերմունքի: Այդ անգամ ևս ես ստիպված էի հետաձգել այցելությունս:

Այժմ արդեն սեպտեմբեր ամիսն է, և ես ցանկություն ունեմ ընդունելու Ձեր հրավերն ու գալ Երևան: Ես կուզենայի Հայաստան այցելել հոկտեմբեր ամսին: Խնդրում եմ ուղարկել բաց վիզա և հայտնել, թե ինչպես կարող եմ առանց գլխացավանքի իմ վիզան ստանալ Սան Ֆրանցիսկոյում կամ Նյու Յորքում: Այս նամակս ստանալուն պես միաժամանակ կիսնդրեի անհապաղ ինձ հայտնել հետևյալ երեք բաների մասին.

1. Եթե Երևան գամ հոկտեմբերին, կարո՞ղ եմ դիտել «Իմ սիրտը լեռներում է», «Խաղողի այգին» պիեսների բեմադրությունը, ինչպես նաև հեռուստատեսային ժապավենը:

2. Ես կարո՞ղ եմ իմ գրքերից, պիեսներից ստացված հոնորարների դիմաց փող ստանալ: Կարո՞ղ եմ օրինական թույլտվություն ստանալ այդ գումարը ծախսելու համար: 1960 թ. Մոսկվայում Գենադի Գենրոնսկին ինձ տարավ իմ գրքերի հրատարակիչների մոտ, որոնք ինձ իմ գրքերի համար գումար տվեցին: Այդ գումարով ես բանկում հաշիվ բացեցի: Եթե Մոսկվայում լինեմ, կարո՞ղ եմ այդ հաշվի դիմաց փող ստանալ: Դժբախտաբար չգիտեմ, թե որտեղ եմ թողել բանկի գրքույկը: Բայց գուցե լինի մեկը, որը կարողանա գտնել այդ հաշվի համարը և ինձ տալ դրա բալանսը:

3. Եթե գամ Երևան, շատ-շատ կցանկանամ, որ ինձ ապահովեք հյուրանոցային մի շատ հանգիստ համարով կամ այլ բնակարանով:

Կցանկանայի այցելել Մատենադարան, կոնյակի գործարան, հնագույն արհեստների թանգարան, մի շարք գործարաններ, դպրոցներ, տարբեր տեսակի վայրեր, հատկապես հին եկեղեցիներ և նման շինություններ:

Գոյություն ունի հին բիթլիսերեն մի արտահայտություն. «Կուզես-կուզես, շատ բան կուզես»:

Հուսով եմ, որ այս նամակը Ձեզ կհասնի 7-8 օրում, իսկ Ձեր պատասխանը կստանամ սեպտեմբերի կեսերին:

Ձեզ և Ձեր ընկերներին եմ ուղարկում իմ լավագույն բարեմաղթությունները:

Հ. Գ. Եվ մի պայման էլ. եթե իմ այցելության ժամանակ ինձ ուղեկցեր մի լուսանկարիչ, սա արդյոք դժվարություններ չէ՞ր հարուցի Ձեզ: Գուցե ես իմ այս այցելության մասին գիրք գրեմ: Ես չէի ուզի Չոլակյանի նման լուսանկարիչ, այլ մի նոր լուսանկարիչ, որը իմ ցանկացած նկարներն աներ:

Վիլյամ Մարոյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 517, թթ. 144-146: Թարգմանություն անգլերեն բնագրից (բնագիրը՝ նույն տեղում, թ. 143, մեքենագիր):

№ 5

10 սեպտեմբերի 1976 թ.
Երևան

Հարգելի պարոն Մարոյան,

Շատ ուրախացանք՝ ստանալով օգոստոսի 27-ի Ձեր նամակը: Հենց որ այն տեղ հասավ, մենք Ձեզ տեղյակ պահեցինք, որ ստացել ենք: Չափազանց ուրախ ենք, որ ընդունել էք մեր հրավերն ու անհամբերությամբ սպասում ենք զայիք հոկտեմբերին Ձեր մոտալուտ ժամանմանը: Ձեր վիզայի հետ կապված բոլոր խնդիրները հոգացել ենք: Վիզան կարող էք ստանալ Ման Ֆրանցիսկոյի սովետական խորհրդից: Ձեր վիզան տասը օրվա համար է, սակայն դա չի նշանակում, որ ստիպված եք լինելու տասնմեկերորդ օրը լքել Հայաստանը: Մենք այստեղ կերկարացնենք Ձեր վիզան՝ ինչքան որ ցանկանաք: Դուք պետք է վերցնեք ինքնաթիռի տոմս դեպի Մոսկվա: Շնորհակալ կլինենք, եթե մեզ նախօրոք տեղյակ պահեք Ձեր ժամանման օրն ու թոնիչի համարը, որպեսզի մեր ներկայացուցիչը Ձեզ դիմավորի Մոսկվայում և ուղեկցի Երևան: Երևանում Դուք կդիտեք «Իմ սիրտը լեռներում է» պիեսի բեմադրությունը, նաև ֆիլմը: Թատրոնի տնօրենը հույս հայտնեց, որ հնարավորություն կունենաք դիտելու նաև «Խաղողի այգին»:

Ցավոք սրտի, Ձեզ վճարելու հարցը կապված է մի շարք բարդությունների հետ: Թեև կա կոնկրետ կանոն, ըստ որի ոչ մի վճար չի տրվելու հեղինակին այն գրքերի համար, որոնք գրվել ու տպագրվել են մինչև 1973 թ. հունիսը, սակայն մենք անում ենք հնարավոր ամեն բան, որ Դուք բացառության կարգով գումար ստանաք Սովետական Միությունում տպագրված գրքերի համար:

Լավ կլինեք, եթե կարողանայիք գտնել Մոսկվայի բանկում 1960-ին ստացած Ձեր բանկի գրքույկը: Եթե շտապ կարիք լինի, մեր ներկայացուցիչը կհանդիպի Ձեզ Մոսկվայում, և Դուք կստանաք գումարը: Երևանում կստանաք գումար այն պատմվածքների համար, որոնք տպագրվել են մեր ամսագրերում և թերթերում: Նշված ողջ գումարը կարող էք տնօրինել՝ ըստ Ձեր ցանկության:

Հայաստանում մնալու ընթացքում Ձեզ համար կստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները: Դուք կմնաք հանգիստ ու հարմարավետ հյուրանոցում, կունենաք հնարավորություն այցելելու տեսարժան վայրեր՝ Մատենադարան, կոնյակի գործարան, հինավուրց եկեղեցիներ ու ճարտարապետական կոթողներ և շատ այլ տեղեր: Ձեզ կուղեկցի մեր լուսանկարիչը, որը կլուսանկարի այն ամենը, ինչ կցանկանաք:

Վստահեցնում եմ Ձեզ, սիրելի ընկեր, որ հետաքրքիր ժամանակ կանցկացնեք Ձեր հինավուրց ու նոր հայրենիքում՝ այն մարդկանց շրջապատում, ովքեր հասկանում և գնահատում են Ձեր արվեստը:

Շատ ուրախ եմք, որ հավանել էք «Իմ սիրտը լեռներում է»-ի համար Առնո Բաբաջանյանի գրած երաժշտությունը և Ձեր պիեսների լուսանկարները: Մենք Ձեր բարևները կուղարկենք Բաբաջանյանին ու Գոնչարին:

Սպասում եմ Ձեր ժամանման օրը հայտնող հեռագրին:

Սիրով՝

Վարդգես Համազասպյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 517, թ. 141-142: Անգլերեն պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն պատճենից:

№ 6

29 օգոստոսի 1977 թ.

Փարիզ

Իմ սիրելի Վարդգես և Վահագն Դավթյան,

Անցյալ հոկտեմբերի համար ես շատ երախտապարտ եմ ձեզ: Եթե ես նամակ չեմ գրում, դա չի նշանակում, որ ձեզ չեմ հիշում: Իմ այցելության ժամանակ ցուցաբերած ձեր բարեհոգությունը ես հիշում եմ անսահման երախտագիտությամբ: Հիրավի, այն ամենալավ այցն էր, որ ես երբևէ ունեցել եմ իմ կյանքում: Դուք պետք է շնորհակալություն հայտնեք Ձորի Բալայանին՝ այդ լավ մարդուն, որն ինձ ապահով հասցրեց Օդեսա, նավ նստեցրեց և հրաժարվեց վերցնել մրգերով ու այլ ապրանքներով լի զամբյուղը: Այդ զամբյուղը կախված է իմ աշխատասենյակի պատից և ինձ հիշեցնում է Ձորիին ու նրա տուն կատարած իմ այցելությունը, որի ժամանակ ես վայելեցի նրա սիրալիր տիկնոջ պատրաստած համեղ կերակուրները, տեսա նրա փոքրիկ երեխաներին: Կցանկանայի, որ Ձորին գրեր սովետական էսկիմոսների հետ անցկացրած իր ժամանակի մասին, քանի որ նրանց մասին գրած Ձորիի պատմվածքներն անմոռանալի են:

Այժմ ցանկանում եմ խոսել մի շարք կարևոր հարցերի մասին.

1. այո՛, ես ուզում եմ այցելել Հայաստան հաջորդ տարի ոչ թե այն բանի համար, որ նշեմ իմ 70-ամյակը, այլ այն բանի համար, որպեսզի նորից վայելեմ մեր փառահեղ երկիրը, մեր ազգն ու ժողովուրդը: Բայց կցանկանայի, որ ինձ համար Գեղարդում մի տուն հատկացնեիք. ոչ այնպիսին, ինչպիսին է Գրիգոր Գուրգադ-

յանի՝ առանձնատունը՝ իր վարդի պարտեզով, այլ մի փոքրիկ տուն, որտեղ ես կարող եմ վայելել հանգստություն և զրոսնել Հայաստանի այդ հեքիաթային ու չոր վայրում: Ուզում եմ խորապես զգալ Հայաստանի աշունն իմ մեջ, զրուցել կենսուրախ և առողջ մարդկանց հետ, ծիծաղել, ուրախանալ, խնդալ ու գոռալ նրանց հետ:

2. Ես ուզում եմ, որ դուք ուղարկեք երկրորդ գորգը, այն փոքր գորգը, որը պատկերում էր սլացող սպիտակ եղնիկ, մյուսը՝ մեծ գորգը, գեղեցիկ է, բայց ես ուզում եմ, որ դուք ուղարկեք փոքր գորգը:

3. Կցանկանայի, որ այդտեղ մեկը մտածեր հրավեր ուղարկելու իմ զարմիկ Խաչիկ (Արչի) Մինասյանին և նրա տիկնոջը՝ Հելենին, որպեսզի նրանք կարողանան առանց ծախսի այս տարվա հոկտեմբերին գալ Հայաստան: Նրանք Փարիզ են գալու սեպտեմբերի կեսերին, և եթե դուք նրանց նամակ գրելու կամ հեռագրելու լինեք, պետք է անեք Փարիզի իմ հասցեով: Նրանք Երևան կժամանեն Փարիզից Մոսկվայի վրայով: Նրանք ունեն իրենց վերադարձի տոմսակը Փարիզից մինչև Պալո-Ալտո, որը գտնվում է Ման Ֆրանցիսկոյի մոտ, և որտեղ բնակվում են նրանք: Վահագն Դավթյանը ծանոթ է Խաչիկի բանաստեղծություններին, և կարծում եմ՝ Խաչիկն այն անձն է, ով պետք է Հայաստան այցելի, տեսնի Հայաստանը, քանի որ նա Ֆրեզնոյում ծնված մշեցի է և սիրում է Հայաստանը ամբողջ հոգով: Հուսով եմ, որ այս գործը գլուխ կբերեք:

4. Կխնդրեի, որ այս նամակն ստանալուն պես ինձ հեռագրով տեղյակ պահեիք դրա ստացման մասին: Կխնդրեի նաև ուղարկել ինձ «Հայրենիքի ձայն» և «Գրական թերթ» շաբաթաթերթի վերջին 11-12 համարները: Ես ենթադրում եմ, որ դրանք ուղարկվում են Ֆրեզնոյի իմ հասցեով, սակայն կխնդրեի, որ ձեզ մոտ կատարեիք իմ հասցեի փոփոխությունը: Երևի դուք Ֆրեզնո էք ուղարկում այն մեծադիր ամսագիրը, որի առաջին էջում մի ժամանակ երևաց իմ գունավոր պատկերը: Ես կխնդրեի, որ ինձ ուղարկվող բոլոր ամսագրերն առաքվեին նոր հասցեով: Կցանկանայի, որ ստույգ գրեիք ինչ էք ուղարկում իմ նոր հասցեով:

5. Ձեր ուշադրությունն եմ հրավիրում Բուրդարիայի «Օրգոր» եռամսյա ամսագրին: Բացարձակապես շատ հոյակապ ամսագիր է: Հրատարակվում է չորս լեզուներով՝ անգլերենով, իսպաներենով, ֆրանսերենով և ռուսերենով: Այն շատ շքեղ հանդես է. գուցե մե՞նք էլ կարողանանք այդպիսի մի եռամսյա հրատարակել:

Շատ հիասթափված էի, որ Վահագն Դավթյանը Մոֆիայում չէր: Ես համոզված էի, որ նա այնտեղ կլիներ, ինչպես նաև Ռազմիկ Դավոյանը, Լևոն Մկրտչյանը և Հրանտ Մաթևոսյանը: Ինչ-որ տանտերերը պահանջեցին ինձանից, ես սիրով և ուրախությամբ հանձն առա: Կարծում եմ, որ այդ հանդիպումը աշխարհի բոլոր գրողներին պարտավորեցրեց կատարել իրենց պարտքը պատմության և անխուսափելի կործանման դատապարտված մարդկության առջև, այն է՝ չսան-

⁷ Խոսքը աստղաֆիզիկոս, Գառնիի տիեզերական աստղագիտության լաբորատորիայի տնօրեն Գրիգոր Գուրգադյանի մասին է, որի տանը Վ. Մարոյանը հյուրընկալվել է իր 1976 թ. այցի ժամանակ:

ձագերծել նոր պատերազմ: Հարկավ մենք մեզ չպետք է սպանենք մեր իսկ ստեղծած զենքերով: Մենք այդպիսի զենքեր միշտ էլ ունեցել ենք. ծանր քարը միշտ էլ զենք է եղել: Հուսով եմ, որ այս նամակով ձեզ շատ չեմ ծանրաբեռնում և ձանձրացնում, պարզապես ձեր նամակին պատասխանում եմ ամենայն մանրամասնությամբ: Ֆրեզնոյի հասցեով ուղարկած ձեր նամակը ստացա ուղիղ մի ժամ առաջ և անմիջապես պատասխանում եմ այդ նամակին՝ հուսալով, որ իմ նամակը ստանալուն պես նման վերաբերմունք կցուցաբերեք նաև դուք:

Գրեթե ավարտել եմ իմ նոր գործը Փարիզում, ուր գտնվում եմ հունիսի 18-ից: Ես, հավանաբար, կթոչեմ Լոնդոն, այնտեղից՝ Իսլանդիա՝ համալսարանում ելույթ ունենալու համար, հետո՝ Նյու Յորք, իսկ այնտեղից էլ՝ Կալիֆոռնիա, ուր կլինեմ հոկտեմբերի սկզբներին, ուստի եթե դուք ինձ գրելու լինեք, խնդրում եմ այդ նամակի կրկնօրինակն ուղարկեք Ֆրեզնոյի իմ հասցեով, բայց հուսով եմ, որ մինչև Փարիզից մեկնելը ձեզանից պատասխան կստանամ:

Վարդգե՛ս, հուսով եմ, որ Ձեր առողջությունը տեղն է: Չեմ մոռանում այն փառահեղ ճաշը, որ Դուք տվեցիք ինձ Ձեր տանը: Առաջին անգամն էր, որ ես այդպիսի արտակարգ ճաշատեսակ վայելեցի՝ այդ փառահեղ քյուֆթան: Ես իսկապես կցանկանայի իմանալ՝ ով է պատրաստում այդ ճաշատեսակը (ըստ հայկական ավանդույթի): Ֆրեզնոյում ես չգիտեմ ոչ ոքի, ով կարողանա պատրաստել այդպիսի ճաշատեսակ, կամ էլ մեկին, ով իր կյանքում երբևէ կերած լինի այն:

Ես խորապես վշտացա՝ իմանալով իմ եղբոր՝ թատրոնի մեծ հանձար Վարդան Աճեմյանի մահվան մասին: Ցավում եմ, որ հաջորդ անգամ Հայաստան այցելելիս ես նրան չեմ տեսնի: Նա շատ-շատ էր աշխատում, և երբ նրան առաջարկեցի հանգստանալ, նա ասաց՝ ո՛չ-ո՛չ, առայժմ՝ ո՛չ: Շատ պարզ բան է՝ նույնիսկ ամենահոգնած մարդը հանգստանում է իր սիրած աշխատանքը կատարելիս: Մենք այնքան քիչ բան գիտենք մարմնի և հոգու առեղծվածների մասին: Չորին գիտի էսկիմոսների մասին: Նա ասում է, որ երբ նրանք զգում են իրենց մոտալուտ մահը, լքում են այն վայրը, ուր բնակվում են...

Վահա՛զն, խնդրում եմ իմ բարենները հաղորդես տիկնոջը և նրան ասես, որ հիշում եմ կարմիր - կանաչ պղպեղով և ձվով պատրաստված կերակուրը, որը սեղան եկավ այնպես, ինչպես արևից եկող լույսը՝ գեղեցիկ և փոքրիկ:

Խնդրում եմ շնորհակալություն հայտնել Աղասուն՝ իր հոյակապ ընկերակցության համար: Նա մեզ անընդհատ դեսուդեն էր տանում:

Վարդգե՛ս, նորից շնորհակալություն Ձեր նամակի համար: Այստեղ՝ Փարիզում, իմ այս նամակի պատասխանին եմ սպասում: Ես գիտեմ, թե որքան հմուտ մարդ էք Դուք, քանի որ ինձ համար Օդեսա - Աթենք նավի տոմսը ձեռք բերեցիք ամենայն արագությամբ:

Ես Օդեսայում՝ աշխարհի այդ լավ քաղաքում, հիանալի ժամանակ անցկացրի: Այնտեղից նավով մտա Դարդանել և Էգեյան ծով: Փառահեղ ճամփորդություն էր:

Դուք ինձ նորից նամակ կգրե՞ք, թե՞ սրան կհետևի լռության երկար շրթան:

Իմ լավագույն բարեմաղթությունը ձեզ և ձեր ընտանիքներին, իմ ընկերներին, եթե թշնամիներ ունեմ՝ նաև նրանց, քանզի մենք բոլորս հայ ենք, և թող նրանք էլ

ստանան իմ լավագույն բարեմաղթությունները: Պետք է շնորհակալ լինենք մեր թշնամիներից, քանի որ նրանք մեզ չեն թողնում հանգստանալ, իսկ երբ եռանդուն էք, կովելով ձեր թշնամիների հետ, նրանց ուղարկելով ձեր ողջույնները, երբեք չեք մեռնի:

Վիլյամ Սարոյան

ՀԱՍ, ֆ. 875, ց. 8, գ. 84, թթ. 25-28: Թարգմանություն անգլերեն բնագրից (բնագիրը՝ նույն տեղում, թ. 24, մեքենագիր):

№ 7

12 հոկտեմբերի 1977 թ.

Երևան

Մեծարգո բարեկամ <Վիլյամ Սարոյան>

Մեծ սիրով կարդացի Ձեր օգոստոսի 19-ի նամակը և իսկույն հեռագրեցի Ձեզ: Իսկ այսօր անհրաժեշտաբար անդրադառնում եմ նամակում արծարծված խնդիրներին: Ամենից առաջ գոհունակություն պատճառեց այն, որ Դուք հաստատ վճռել էք զալիք տարի այցի գալ հայրենիք: Մենք ամեն ինչ կանենք, որ պեսզի Դուք հաճելի ժամանակ անցկացնեք և ունենաք բարձր տրամադրություն:

Մենք կցանկանայինք, որպեսզի հայրենիքում Դուք հանգստանայիք Դիլիջանի կոմպոզիտորների տանը: Հայաստանի այդ հեքիաթային և խաղաղ վայրում Դուք կարող եք և՛ հանգստանալ, և՛ ստեղծագործել:

Ինչ վերաբերում է գորգին, մենք արդեն Ձեզ գրել էինք, որ Ձեր հավանած գորգը թերություն ունեք: Խոստանում եմ մինչև Ձեր գալը ձեռք բերել Ձեր ուզած գորգը: Սյնպես որ, սիրելի՛ բարեկամ, հայրենիքում Դուք անպայման կստանաք այդ գորգը:

Ցավում եմ, որ այս տարի Ձեր զարմիկին՝ Արչի Մինասյանին և իր տիկնոջը Հայաստան հրավիրել չենք կարող: Կաշխատենք այդ այցելությունն իրականացնել 1978-ին:

Հաճույքով տեղեկացանք, որ Դուք ավարտել եք Ձեր վերջին թատերական գործը: Ուրախ կլինեինք, եթե ունենայինք Ձեր այդ պիեսի պատճենահանված օրինակը:

Ձեր 2729, West Griffith Way հասցեով մենք արդեն ուղարկել ենք «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսների համարները: Առաջիկայում մեր պարբերականները և գրականությունը նույնպես կուղարկենք Ձեր այդ հասցեով:

Ձեզ քաջառողջություն և բարձր տրամադրություն մաղթելով՝ մնամ Ձեր բարեկամ՝

Վարդգես Համազասսայան

ՀԱՍ, ֆ. 875, ց. 8, գ. 84, թթ. 22-23: Բնագիր: Ձեռագիր:

18 դեկտեմբերի 1978 թ.

Փարիզ

Սիրելի Լևոն⁸ և սիրելի Արլին Արդայան,

Սկզբում մի քանի փաստ: Ես վերադառնալու եմ Կալիֆոռնիա 1979 թ. հունվարի 7-ին, սա համենայն դեպս, եթե ձեր պատասխանն ինձ հասնի շատ ուշ, և ես այլևս այնտեղ չլինեմ: Այդ դեպքում գրեք ինձ Ֆրեզնո, 2729 Վեսթ Գրիֆիթ Վեյ, Կալիֆոռնիա 93705, ԱՄՆ: Երկուսիդ էլ շնորհակալ եմ 1978 նոյեմբերի 16-ի նամակների, նաև Քուչակի ձայնագրելու համար: Խնդրում եմ ասեք ինձ, թե ո՞վ է ընթերցում: Լավ կարդաց: Էվալդ Օգերսից՝ ստացել եմ մի քանի հրաշալի նամակ ու Քուչակի հայրենները: Գրել եմ նաև իմ նախաբանը, որն, իհարկե, մի մեծ բան չէ, բայց դե գրել եմ, ու եթե պարզ չլինի գրառումս, կարող եմ էջ առ էջ պարզաբանել, որ Արլինը կարողանա ձեռագրերս ճիշտ տպագրել և մի օրինակ ուղարկել Էվալդ Օգերսին: Ես անքան եմ զբաղված խառը գործերով, որ Էվալդ Օգերսին իմ փոխարեն դուք պիտի տեղյակ պահեք: Բայց, իհարկե, հետագայում ինքս կգրեմ նրան: Լևոն, շնորհակալություններ փոխանցիր Մոսկվայում քո ուսանողուհուն՝ Ալլա Նիկոլանսկային, իր թարգմանությունների համար, սակայն ես չեմ կարող նամակների կրկնօրինակներ ուղարկել այս հասցեից, ինչպես որ նա խնդրել էր ինձ Երևանում: Երևանում հավելյալ օրինակներ չկա՞ն, որ նա կարողանա վերցնել որոշ ժամանակով: Շնորհակալ եմ, որ նոյեմբերի 16-ի նամակին կցել եք «Իմ անունն Արամ է» գործի համար գրված նախաբանի պատճենը: Մի քանի ուղղումներ պետք է արվեն, բայց դրանք այդքան էլ կարևոր չեն, և ուրեմն համարենք, որ նախաբանը պատրաստ է: Բայց հենց որ գիրքը թողարկվի, խնդրում եմ՝ չմոռանաք ինձ օդային փոստով մի օրինակ ուղարկել՝ նախաբանով և բոլոր պատմվածքներով, ձեռագիր գրված, որ ես իմանամ՝ ինչն ինչոց է, ու որ ամեն պատմվածք իր տեղում լինի: Խնդրում եմ գրել դրանց անգլերեն վերնագրերը: Հետո տասներկու օրինակ էլ ուղարկեք ցամաքային փոստով: Ասեք իմ լավ բարեկամ Վիկտոր Բալայանին⁹, թող մի կերպ գտնի «Թրեյսիի վագրի» տասներկու օրինակ և դրանք ուղարկի ինձ Ֆրեզնո: Հետագայում գրքերից ուղարկեք տասներկու օրինակ, իսկ թերթեր ու պարբերականներ՝ երկու-երեք օրինակ: Գուցե թվա, թե շատ եմ ուզում, բայց դա այդպես չէ: Խնդրում եմ ողջուններս փոխանցել Վահագն Դավթյանին՝ Արգենտինայից վերադառնալու կապակցությամբ: Ասացեք նրան և Վարդգես Համազասպյանին, որ անգլերենով ցանկացած հրատարակություն պետք է ինձ ուղարկվի Ֆրեզնո, որ ես իմանամ՝ ինչ է կատարվում: Սա մի քանի անգամ կրկնել եմ, ինձ վստահեցրել են, որ այդպես էլ կանեն, բայց դեռ ոչ մի անգամ չեն արել: Արլինին ասել եմ, որ նախաբանը կվճա-

⁸ Խոսքը գրականագետ Լևոն Մկրտչյանի (1933–2001) մասին է, որն ունի մենագրություն «Վիլյամ Սարոյանը մոտիկից» (Երևան, 1978):

⁹ Էվալդ Օգերս (1917) – գրականագետ, թարգմանիչ, անգլերեն է թարգմանել Նահապետ Քուչակի «Հարյուր և մեկ հայրեն» ժողովածուն՝ Վ. Սարոյանի առաջաբանով:

¹⁰ Խոսքը արձակագիր, լրագրող Վ. Բալայանի մասին է, որը 1970–74 թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության գլխավոր խմբագիրը:

կեմ, սակայն ևս մեկ անգամ կարդալով՝ համոզվում եմ, որ ամեն բան պարզ է, ու չեմ ցանկանում ո՛չ ինձ, ո՛չ էլ Արլինին ծանրաբեռնել՝ այդ ամենը ևս մեկ անգամ կրկնելով: Ինչ էլ որ ուղարկում եմ ձեզ իմ ձեռագրերից, խնդրում եմ դրանք հետ ուղարկել Ֆրեզնո, քանի որ պետք է ունենամ այդ ամենն ինձ մոտ՝ ներառյալ «Իմ անունը Արամ է» գրքի նախաբանը: Այսքան խոսեցի գործից և պետք է ասեմ, Լևոն՝, Դուք երջանիկ եք, որ Արլինը թարգմանում ու գրում է Ձեզ համար. նա հրաշալի է: Արլի՛ն, Դուք էլ երջանիկ եք, քանի որ աշխատում եք Լևոնի հետ. նա հրաշալի է: Այն նամակը, որ թարգմանել եք Լևոնի համար, զվարճալի է ու իմաստուն. նրա մտքերը շատ խորն են՝ կապված աշխարհի, մարդկության, հայերի ու մնացածի հետ: Դուք երկուսդ պետք է ինձ տեղեկացված պահեք, քանի որ ուրիշ ոչ ոք Երևանում չունի Լևոնի հանձարն ու Արլինի տաղանդը: Ինձ չհիասթափեցնեք: Արլի՛ն, Դուք ինձ պետք է ուղարկեք Ձեր պատմվածքը ու նաև Լևոնին, եթե կան օրինակներ նրա գրքերից՝ հայերենով, ռուսերենով, անգլերենով կամ ցանկացած այլ լեզվով, խնդրում եմ ուղարկեք ինձ: 1978 թ. շատ լավն էր ինձ համար, ինչպես և հույս ունեի ու պլանավորել էի, առաջին հերթին այն բանի համար, որ այցելեցի Հայաստան: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բոլորին, ովքեր ինձ օգտակար եղան իմ այցելության ժամանակ: Շնորհավոր Օննոյան տոներն ու Ամանորը: Լևոն՝, ուղարկիր ինձ Ձեր ու Ձեր ընտանիքի անդամների լուսանկարները և բարևներս հաղորդիր որդուդ, որին հանդիպել եմ 1976-ին: Նա շատ լավ մարդ է, հուսամ՝ հոր հետքերով կգնա: Լավ եղեք ու հիշեք: Ես հույս ունեմ, որ իմ ասածները չեն անտեսվի:

Վիլյամ Սարոյան

ՀԱՍ, ֆ. 875, ց. 8, գ. 108, թ. 56: Անգլերեն բնագիր: Մեքենագիր: Թարգմանություն բնագրից:

№ 9

21 մարտի 1979 թ.
Երևան

Հարգելի բարեկամ <Վիլյամ Սարոյան>

Շուրջ 4 ամիս է անցել այն օրից, ինչ մենք բաժանվեցինք, սակայն մինչև օրս Ձեզանից որևէ լուր չունենք:

Մեզ զարմացնում է այն, որ Դուք հաճախ լռության եք մատնում կամ անպատասխան թողնում մեր կողմից ուղարկված նամակները, որ մենք ժամանակին, թեև ոչ հաճախ, ուղարկում ենք Ձեզ: Մենք հասկանում ենք, որ Դուք բազմազբաղ եք և հնարավորություն չունեք պատասխանելու բոլոր նամակներին, սակայն կոմիտեն այն հաստատությունն է, որի միջոցով մեր ժողովրդին կարող եք հասցնել Ձեր ցանկություններն ու մտորումները:

Մենք մեծ խորհուրդ ենք տեսնում այն բանում, որ Դուք՝ մեր ժողովրդի ծոցից դուրս եկած ու համաշխարհային ճանաչումի արժանացած հայազգի զավակը,

աշխարհին էք ներկայացնում հայ միջնադարյան գրականության ականավոր դեմքերից մեկին՝ Նահապետ Քուչակին: Շնորհավորում ենք և հաջողություններ մատթում:

Մեր այս նամակի հետ այսօր Ձեր Ֆրեզնոյի հասցեով փոստին ենք հանձնում մի քանի օրինակ «Թրեյսիի վագրը» գրքից: Ստանալուն պես կհնդրեինք մեզ տեղյակ պահել: Միաժամանակ հաճելի կլիներ իմանալ՝ ինչպիսի՞ տպավորություններով էք վերադարձել մայր հայրենիքից, ինչպե՞ս հասաք Ալեքսանդրիա, ինչպե՞ս գտաք Ձեր բարեկամներին ու ընկերներին երկարատև բաժանումից հետո:

Ձերմ ողջույններով և հաջողության լավագույն մտղթանքներով՝

Կոմիտեի նախագահ՝

Վարդգես Համագասայան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 8, գ. 108, թ. 55: Պատճեն: Մեքենագիր:

№ 10

23 հոկտեմբերի 1981 թ.

Ֆրեզնո

Պարոնյաք,

Ես «Վիլյամ Սարոյան հիմնարկության», ինչպես նաև Վիլյամ Սարոյանի (որն ինչպես հայտնի է, մահացել է 1981 թ. մայիսի 18-ին) կալվածքի փաստաբան եմ:

Սարոյանն իր կտակի մեջ նշել է, որ եթե հնարավոր է, ըստ կամոք «Վիլյամ Սարոյան հիմնարկության» խնամակալների, իր աճյունի կեսը (1/2-ը) փոխադրվի Հայաստանում որևէ հարմար տեղ: Մենք այդ խնդիրը քննարկեցինք Հայաստանի գրողների միության նախագահ պրն Վարդգես Պետրոսյանի հետ 1981-ի հուլիսի 26-ին, երբ նա գտնվում էր Ֆրեզնոյում՝ ներկա լինելու Վիլյամ Սարոյանի հիշատակին նվիրված արարողությանը: Այդ ժամանակ 2 խնամակալների՝ իմ և պրն Պետրոսյանի միջև կայացավ ընդհանուր համաձայնություն այն մասին (սա ենթակա էր մյուս խնամակալների համաձայնությանը), որ Սարոյանի աճյունի 1/2-ը փոխադրվի Երևան՝ Հայաստան, հանուն իր պատվի հատուկ հիշողության:

1981-ի հուլիսի 26-ին պրն Պետրոսյանի հետ ունեցած հանդիպումից հետո «Վիլյամ Սարոյան հիմնարկության» մյուս խնամակալները (որոնք ներկա չէին պրն Պետրոսյանի հետ հանդիպմանը) նույնպես որոշեցին, որ պրն Սարոյանի աճյունի 1/2-ը փոխադրվի Երևան: Այս լրացուցիչ համաձայնության հետ միասին «Վիլյամ Սարոյան հիմնարկության» բոլոր խնամակալների կողմից միաձայն որոշում ընդունվեց, որ Սարոյանի աճյունի 1/2-ը փոխադրվի Երևան՝ որպես մշտական հանգչելու վայր:

Այդ որոշման օրինակը ներփակ ուղարկվում է Ձեզ՝ ի գիտություն: Պրն Պետրոսյանին արդեն 1 օրինակ տրվել է այս որոշումից:

Ներկայումս «Վիլյամ Մարոյան հիմնարկության» փափագն է ի կատար ածել որոշումը և որքան հնարավոր է շուտ կազմակերպել աճյունի փոխադրման հետ կապված հարցերը: Մեր կարծիքով այս գործընթացը պիտի բաղկացած լինի 2 իրադարձությունից. առաջինը պետք է լինի աճյունի փոխադրումը, երկրորդը՝ դրա տեղադրումը Երևանի պանթեոնում՝ այն վայրում, ուր ներկայումս քանդակվում է հուշարձանը և ուր այն պետք է կանգնեցվի: Աճյունը պետք է ամփոփվի փոխադրումից 1 տարվա մեջ ընկած ժամանակաշրջանում: Հանուն մեր երկկողմանի պարտականությունների իրագործման՝ առանց ավելորդ ձգձգումների պետք է գնահատենք Ձեր շտապ պատասխանը հետևյալ խնդրանքներին և հարցումներին.

Առաջին՝ արագացվի և դյուրացվի Մարոյանի աճյունը Երևան փոխադրող «Վիլյամ Մարոյան հիմնարկության» պատվիրակության ճամփորդությունը, ինչպես նաև արագացվի աճյունի փոխադրման հետ կապված մաքսատնային թույլտվության ձեռքբերումը: «Վիլյամ Մարոյան հիմնարկության» խնամակալները կցանկանային Ձեր կոմիտեից հրավեր ստանալ՝ հասցեագրված «Վիլյամ Մարոյան հիմնարկության» խնամակալներին, որի մեջ ասվեր, որ պատվիրակություն է հրավիրվում «Վիլյամ Մարոյան հիմնարկությունից»՝ իր հետ Երևան բերելու Մարոյանի աճյունը՝ այն մշտական տեղադրելու նպատակով՝ համաձայն «Վիլյամ Մարոյան հիմնարկության» խնամակալության վարչության 1981 թ. հուլիսի 31-ին կայացրած որոշման, որի պատճենը ներփակ ուղարկվում է այս նամակի հետ: Խնդրո առարկա հրավիրագիրը պետք է ուղարկվի ներքոստորագրյալիս՝ վերոհիշյալ հասցեով:

Երկրորդ՝ կապված այս հրավիրագրի հետ, մեծապես գնահատելի պետք է լինի, եթե Դուք մեզ հայտնեք պատվիրակությանը մաս կազմող անդամների ցանկալի թվի մասին, որը պետք է փոխադրի Մարոյանի աճյունը:

Երրորդ՝ գնահատելի կլիներ իմանալ, թե «Վիլյամ Մարոյան հիմնարկության» համար գոյություն ունի որևէ ֆոնդ՝ հոգալու պատվիրակության ճամփորդության հետ կապված ամբողջական կամ մասնակի ծախսերը: Այս կապակցությամբ Ձեզ պետք է հայտնի լինի, որ թեպետ ժամանակի ընթացքում «Վիլյամ Մարոյան հիմնարկությունը» պետք է սեփականատերը դառնա Մարոյանի ողջ գրական և այլ ունեցվածքի ու պետք է ստանա այդ ունեցվածքի եկամուտ-հասույթը, ներկայումս հիմնարկությունը ֆինանսական աղբյուրներ չունի՝ հոգալու պատվիրակության Երևան այցելության հետ կապված ծախսերը:

Չորրորդ՝ կուզենայինք խորհրդի կարգով իմանալ պատվիրակության Երևան այցելության մասնավոր թվականի մասին: Խնամակալների համար կարևոր է այս մասին իմանալ որքան հնարավոր է շուտ, որպեսզի պատվիրակության անդամները իրենց օրացուցային պլանները կազմեն ըստ այդմ:

Մենք պատրաստ ենք Մարոյանի աճյունը փոխադրել՝ համաձայն նրա սեփական ցանկությունների և անհամբեր սպասում ենք Ձեր հրավիրագրին և վերը առաջ քաշած հարցերի Ձեր պատասխաններին:

Հարգանք՝

Ռոբերտ Մ. Դեմիր

ՀԱՍ, ֆ. 875, ց. 9, գ. 101, թթ. 49-51: Թարգմանություն անգլերեն բնագրից (բնագիրը՝ նույն տեղում, թթ. 44-45, մեքենագիր):

№ 11

9 դեկտեմբերի 1981 թ.
Երևան

Հարգելի պարոն Դեմիր,

Ամենից առաջ կուզենայի Ձեզ տեղեկացնել, որ մեր մեծ հայրենակիցը՝ Վիլյամ Սարոյանը, արժանացավ ՀԽՍՀ Գերագույն սովետի մրցանակին՝ խաղաղության և մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդման օգտին կատարած ակտիվ գործունեության համար:

Այդ բարձր մրցանակի շնորհումը գոհունակությամբ ընդունվեց մեզանում՝ իբրև մեծ գրողի, հայրենասերի և խաղաղության նվիրյալի կյանքի և վաստակի արժանի գնահատանք:

Վստահ ենք, որ սփյուռքահայության զանգվածները նույնպիսի զգացումով կընկալեն մրցանակի շնորհումը:

Ի պատասխան հոկտեմբերի 23-ի Ձեր նամակի (որ մենք ստացանք նոյեմբերի սկզբներին)՝ հայտնում ենք, որ Հայաստանի գրողների միությունը ուրախությամբ ի գիտություն է ընդունում Սարոյան ֆոնդի վերջնական որոշումը՝ մեծ գրողի աճյունի մի մասը (համաձայն կտակի) Մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան փոխադրելու մասին:

Ինչպես ես Ձեզ արդեն տեղեկացրել էի, Վ. Սարոյանի աճյունը հողին կհանձնենք Երևանում՝ Կոմիտասի պանթեոնում, որտեղ թաղված են մեր մշակույթի մեծերը:

Մենք նպատակահարմար ենք համարում, որ աճյունի փոխադրությունն իրականացվի 1982 թ. գարնանը, ավելի ճշգրիտ՝ 1982 թ. մայիսի երկրորդ կեսին¹¹, որը զուգադիպում է գրողի մահվան առաջին տարելիցին:

Նպատակահարմար կլինի, որ Սարոյանի ֆոնդի ներկայացուցչի հետ աճյունն ուղեկցեն ամերիկյան մեկ և ամերիկահայ մեկ գրող, այսպիսով՝ երեք մարդ¹²:

Սովետական Հայաստանում պատվիրակությունը կլինի Հայաստանի գրողների միության և Սփյուռքի կոմիտեի հյուրը, ուր անհրաժեշտության դեպքում մենք միջոցներ կորոնենք նաև ճանապարհածախսը (առնվազն՝ մի մասը) վճարելու համար:

¹¹ Սարոյանի աճյունը Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում հուղարկավորվել է 1982 թ. հունիսի 1-ին:

¹² Կալիֆոռնիայից Սարոյանի աճյունը տեղափոխող պատվիրակությունը գլխավորել է «Վիլյամ Սարոյան հիմնարկության» փաստաբան Ռ. Դեմիրը: Պատվիրակության կազմում են եղել Ալան Ե. Ջանդյանը, Տիգրան Գույումճյանը, Օշին Քեշիշյանը:

Գրողի մահարձանի հետ կապված հարցերը մենք կլուծենք իր ժամանակին, ինչպես վայել է մեծ գրողի և քաղաքացու անվանն ու հիշատակին:

Վերջում կուզենայի, որ Դուք իմ բարեկամական ողջույնները հաղորդեիք պարոն Պեաերսին և պարոն Մեդրակյանին, որոնց հետ ունեցած մեր հանդիպումը Ֆրեզնոյում ես հիշում եմ սիրով:

Թեպետ մենք բավական ժամանակ ունենք, բայց կուզենայինք Ձեզանից շուտափույթ պատասխան ստանալ՝ հարցերը վերջնականապես ճշգրտելու համար:

Հարգանքով՝

Հայաստանի գրողների միության

վարչության նախագահ Վարդգես Պետրոսյան

ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 101, թթ. 38–39: Պատճեն: Մեքենագիր: